

ԲԱՆԱԽՈՍ

2001 05 07

ԹԻՎ 47

2001 04 12


Եվրոհնտեգրացիան և Անդրկովկասը

ԹՈՍԱՍ - ՅԵՆԴՐԻԿ ԻԼՎԵՍ

Էստոնիայի արտաքին գործերի նախարար

Ինձ համար շատ հաճելի է լինել այստեղ՝ Հայաստանում: Ավաղ սա իմ առաջին այցն է Երևան, բայց հուսով եմ, այն վերջինը չի լինի: Ուրախ եմ տեսնել, որ մենք գտնվում ենք այն երկարատև կապերի վերականգման ճանապարհին, որ գոյություն են ունեցել մեր երկու երկրների միջև: Ես ի նկատի չունեմ այն կապերը, որոնք ստեղծվել են զարգացել են «Ժողովուրդների բարեկամության» («Դրուժբա մարոդով») ժամանակաշրջանում, Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության ինտերնացիոնալ ոգու պայմաններում:

Մենք շատ հպարտ ենք, որ հայրց ազգային վերածննդի նշանավոր գործիչներից մեկը՝ Խաչատուր Աբովյանը, 1830-1836 թվականներին սովորել է Էստոնիայի Տարտուի համալսարանում: Կարող եմ ավելացնել մի շարք այլ նշանավոր հայերի՝ Ստեփանոս Նազարյան, Ռաֆայել Պատկանյան, Գեորգ Դոդոխյան: Կարծում եմ, սա շատ ավելի հարուստ հիմք կարող է հանդիսանալ հետագա հարաբերությունների համար, որոնք Հայաստանը եւ Էստոնիան՝ որպես ժամանակակից պետություններ, կզարգացնեն միասին, միեւնույն միջավայրում: Կարծում եմ, այն համագամաքը, որ երկու երկրները կրկին ձեռք են բերել անկախություն, նույնպես պետք է հիմք հանդիսանալ Հայաստանի եւ Էստոնիայի միջև ապագա հարաբերությունների համար:



Մեկ այլ կարեւոր ոլորտ, որտեղ, իմ կարծիքով, երկու երկրներն ունեն ընդհանրություն, այն է, որ եւ Հայաստանը, եւ Էստոնիան ունեն Սփյուռք, որը կարեւոր դեր է խաղացել հետանկախացման տարիներին երկիրը կառուցելու գործընթացում, ինչը բավականին օգտակար փորձ է ձեռք բերել: Այն երկրները, որոնք հակամարտ վերաբերմունք ունեն Սփյուռքի նկատմամբ, թանկ են վճարում դրա դիմաց: Կարծում եմ, որ Հայաստանն այն երկիրն է, որը մեծ հաջողություններ է ունեցել այս ոլորտում:

Էստոնիան եւ Հայաստանը բավականին սերտորեն աշխատում են եվրոպայի Խորհրդում, որի անդամ դարձել են երկուսն էլ: Հուսով եմ, որ շատ շուտով Էստոնիան կողջունի Հայաստանի մուտքն Առեւտրի համաշխարհային կազմակերպություն: Հենվելով արտաքին գործերի, արդյունաբերության եւ առեւտրի նախարարների, Խորհրդարանի խոսնակի հետ իմ ունեցած քննարկումների վրա, կարող եմ ասել, որ երկու

երկրների միջեւ համագործակցության մեկ այլ ոլորտ է ինֆորմացիոն տեխնոլոգիաները, որը բավականին զարգացած է Հայաստանում եւ մեծ ուշադրության է արժանացել էստոնիայում: Սենք հպարտ ենք, որ էստոնիան ինտերնետային ներթափանցմամբ, յուրաքանչյուր անձի հաշվով ինտերնետային կայքերի թվով արդեն գերազանցում է եվրոմիության 1/3-ին, որը բավականին նշանակալի ձեռքբերում է փոքր եւ աղքատ երկրի համար: Սա մենք դիտում ենք, որպես հետագա զարգացման բանալի:

Անշուշտ ես մի փոքր կանդիդատնամ անել այն ընդհանուր պրոբլեմներին, որ ունեցել է էստոնիան, խնդիրներ, որոնք կապված են այն հանգամանքի հետ, թե ինչպես են վերաբերվել այնպիսի երկրներին, ինչպիսիք են էստոնիան եւ Հայաստանը: Սեզ դուր չի գալիս այն, որ էստոնիան համարում են նախկին խորհրդային երկիր, այնպես ինչպես դուր չի գա Չեզ, եթե Հայաստանն անվանեն նախկին Օսմանյան կայսրության տարածք:

Այն, ինչի մասին պետք է խոսեն, վերաբերվում է էստոնիայի եւ եվրոմիության փոխհարաբերություններին, ինչպես նաեւ էստոնիայի ինտեգրացմանը դեպի եվրոպա՝ խորհրդային կառավարման երկարատեւ տարիներից հետո: Հենց այս հարցում շատ բան կա, որ կարող ենք կիսել եւ քննարկել մեր փորձերը, քանզի մենք, ի վերջո, սկսել ենք միեւնույն տեղից: Այն ռեֆորմները, որ իրականացվել են մեր կողմից, ինչ-որ ձեւերով նման են այն բարեփոխումներին, որոնց հետամուտ է եղել Հայաստանը: Սակայն մի շարք ոլորտներում եղել են որոշ տարբերություններ, ինչի մասին ես կխոսեմ:

Այս ժամանակաշրջանում էստոնիայի ունեցած առավելություններից մեկը եղել է այն, որ նա գերծ է մնացել պատերազմներից եւ հակասություններ չի ունեցել իր հարեւանների հետ: Սա մի պատճառ է, թե ինչու ենք մենք եռանդուն կերպով պաշտպանում խաղաղ գործընթացը եւ ողջունեցինք այն քայլերը, որ ձեռնարկեց Հայաստանի կառավարությունը Քի-Ուեսթում: Սենք եռանդուն կերպով պաշտպանում ենք Ձեր

ջանքերը եւ հուսով ենք, որ բանակցային գործընթացի շնորհիվ, որը բավականին զգալի կերպով առաջընթաց է ունեցել, կփակվի այս էջը, եւ Դուք հնարավորություն կունենաք ավելի քիչ ծախսել ՀՆԱ-ից ռազմական ոլորտի վրա եւ, որը այն ձեռքբերումներից մեկն է, որ ունեցել է էստոնիան իր զարգացման ընթացքում: Սա է հենց այն տարբերությունը, որը դժվարություններ է առաջ բերել Հայաստանում, սակայն, համոզված եմ, որ խաղաղ գործընթացի հաջող ավարտը հնարավորություն կտա նույն ուշադրությունը կենտրոնացնել տնտեսական զարգացման վրա:

Մի հայացք նետելով էստոնիայի վրա, տեսնենք, թե ինչ է արվել վերջին տասը տարիների ընթացքում: էստոնիայի բնակչության թիվը 1.4 միլիոն է, ՀՆԱ-ի ցուցանիշը՝ 5 մլրդ. ԱՄՆ դոլար, ՀՆԱ-ի 2000 թվականի ցուցանիշը յուրաքանչյուր շնչի հաշվով ըստ գնողունակության կազմում է 7,826 ԱՄՆ դոլար: Ըստ UNDP-ի տվյալների, էստոնիան պատկանում է բարձր զարգացած երկրների շարքին, չնայած երկար ժամանակ բավականին հետ էր մնում զարգացման տեսանկյունից: Սենք գերազանցել ենք Հունգարիային, որը Արեւելյան Եվրոպայի հետկոմունիստական այն երկիրն էր, որ ուներ մեկ

«էստոնիայի բնակչության թիվը 1.4 միլիոն է, ՀՆԱ-ի ցուցանիշը՝ 5 մլրդ. ԱՄՆ դոլար, ՀՆԱ-ի 2000 թվականի ցուցանիշը յուրաքանչյուր շնչի հաշվով ըստ գնողունակության կազմում է 7,826 ԱՄՆ դոլար:»

անձի հաշվով ամենամեծ օտարերկրյա ուղղակի ներդրումներ: էստոնիան չորրորդն է Սինգապուրից, Չիլիից եւ Հոնգ-Կոնգից հետո, որ կարող է օգտվել նոր ձեւավորվող շուկայից: Սա վերաբերվում է ներդրողների լայն շրջանակներին հիմնված, տնտեսական ազատության ցուցանիշի վրա: էստոնիայի ժառանգական ինստիտուտը գրավում է 14-րդ տեղը 169 երկրների շարքում, որը զլխավորում են Գերմանիան, Եվեդիան եւ Ֆինլանդիան: Նրանք, ում գործունեությունը կապված է տնտեսության հետ, ուղղակի ներդրումներ են կատարում էստոնիայում, որոնք կազմում են էստոնիայի ՀՆԱ-ի 36,5% 1998 թվականի մակարդակով: Սա նույնպես ամենամեծ ցուցանիշն է Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում՝ կրկնակի գերազանցելով եվրոմիության միջին ցուցանիշները: էստոնիան ամենամեծ ներդրող երկիրն է հետկոմունիստական աշխարհում:



Թոմաս-Հենդրիկ Իլվեսը ծնվել է 1953 թվականին: Համալսարանական կրթությունը ստացել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոլումբիայի համալսարանում, ասպիրանտական կրթությունը՝ Փենսիլվանիայի համալսարանում: Կրթությունը զարգացրել է տարբեր կրթական հաստատություններում, այդ թվում՝ Նյու Ջերսիում, Վանկոլվերի Սիմոն Ֆրազերի համալսարանում եւ Բրիտանական Կոլումբիայում: Աշխատել է որպես ռադիոյի մեկնաբան, այնուհետեւ, որպես տնօրեն: Եղել է էստոնիայի դեսպանը Միացյալ Նահանգներում, 1996-1998 թվականներին՝ էստոնիայի արտաքին գործերի նախարար: 1998 թվականին նշանակվել է Պարսից Ատլանտյան Ինստիտուտի նախագահ, իսկ 1999 թվականից՝ արտաքին գործերի նախարար:

Տիրապետում է մի շարք լեզուների, ամուսնացած է, ունի երկու երեխա:

Էստոնիայում, ինչպես նաև Հայաստանում, ամեն ինչ պետք է հաշվվի մեկ անձի շնչով: Երբ գործ ունենք այնպիսի քվի հետ, ինչպիսին 1,4 միլիոնն է, պետք է բաժանել այն ըստ բնակիչների քվի, այլապես երբեք ոչնչի չենք հասնի: Այժմ մենք երկրորդ ներդրող երկիրն ենք Լատվիայում եւ չորրորդը՝ Լիտվայում: Սա բնական է քանզի փոքր երկրներն ունեն փոքր շուկաներ:

Տնտեսական աճը կախված է մեծ շուկաներից, ուստի մենք գիտակցում ենք, որ ամերիաժեշտ է զարգացնել եւ ընդլայնել ներդրումային քաղաքականությունը Էստոնիայի սահմաններից դուրս, որովհետեւ սա մեր նպատակներին հասնելու՝ Եվրոմիությանը հավասար զարգացման մակարդակ ունենալու միակ ճանապարհն է: Մենք շարժվում ենք առաջ, եւ, եթե 1991 թվականին մեր ապրանքների ավելի քան 90%-ը արտահանվում էր նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններ, ապա այժմ դրանց 70% արտահանվում է Եվրոմիություն: Արտահանումների միայն 2% է բաժին ընկնում Ռուսաստանին: Տեսնում եք, թե ինչպիսի տեղաշարժ եւ փոփոխություն է գրանցվել մեր ամբողջ տնտեսության մեջ:

Մեր հիմնական նպատակներից ու ձեռքբերումներից մեկն է եղել ուղղել մեր տնտեսությունը դեպի Եվրոպա եւ նվազագույնի հասցնել տնտեսական ցանկացած կախվածություն, բացառությամբ Եվրոմիությունից կախվածության: Խնդիրը կայանում է նրանում, թե ինչպես է իրականացվել այն: Ես միշտ էլ եղել եմ այն համոզման, որ Արեւելյան Եվրոպայի անկախացումից առաջ Արեւելյան եւ Արեւմտյան Եվրոպաներն ունեին գործունեության տարբեր ուղղվածություններ: Մենք տարբեր մոտեցումներ ունեինք որոշումներ կայացնելու, հաջողության հասնելու վերաբերյալ: Սա հիմնված է Արեւելյան եւ Արեւմտյան Եվրոպաների տարբեր պատմական փորձերի վրա: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտին ցնցված եւ ավերված Արեւմտյան Եվրոպան, որն այլեւս չէր կարող ձեռնարկել ոչ մի արմատական քայլ, ոչ ավել-ոչ պակաս, որոշեց որդեգրել աստիճանական փոփոխության ստրատեգիան: Եվրոմիության զարգացումն ու ձեռքբերումները, սկսած համայնքի կազմակերպումից մինչեւ այսօր, ընթացել է դանդաղ եւ անընդհատ մեծացող քայլերով: Ամեն ինչ արվում էր քայլ առ քայլ, եւ հենց աստիճանական մոտեցման վրա հիմնված Արեւմտյան Եվրոպայի փորձն էր, որ հանգեցրեց տնտեսական հրաշքի, ինչպիսին այսօր Արեւմտյան Եվրոպան է եւ քաղաքական հզոր համակարգի, ինչպիսին ունի այսօր Արեւմտյան Եվրոպան: Ամենավատ հանգամանքն այն է, որ Արեւմտյան Եվրոպան միշտ էլ վախեցել է արմատական փոփոխություններից, որը դիտվել է որպես անկայունության աղբյուր, իսկ անկայությունից պետք է խուսափել ամեն գնով:

Հետկոմունիստական փորձը ճիշտ հակառակն էր: Բրեժնեվի իշխանության տարիները, որոնք մեզ համար ամենաբարենպաստն էին, հավասարազոր էին

լճացման ժամանակաշրջանին: Չեխերը, հունգարացիները, էստոնացիները, նաև Դուք՝ հայերը, անկախացաք շնորհիվ արագ եւ վճռական գործողությունների: Մեր փորձը կայանում է նրանում, որ չենք հապաղում. եթե ունես գործելու հնարավորություն՝ գործիր ամնիջապես, որովհետեւ նման հնարավորություն կարող է էլ չստեղծվել: Սասնավորապես այս հարցում մեր մտածելակերպը տարբերվում է արեւմտաեվրոպացիների մտածելակերպից: Եվ հենց այդ մտածելակերպի շնորհիվ էր, որ Էստոնիայի կառավարությունը եւ էստոնական պառլամենտը 1990-1991 թվականներին արագ որոշում կայացրեցին հռչակել երկրի անկախությունը եւ կրկին ղեկավարել իրենց սեփական երկիրը: Մենք հավատարիմ մնացինք բարձրագույն որոշումներ ընդունելու եւ դրանք արագ կենսագործելու գործընթացին:

«Այս ամենն արվեց Արեւմուտքի խորհրդին հակառակ, ինչը, իմ կարծիքով, մեր հաջողության կարեւոր կողմն է:»

Այս ամենն արվեց Արեւմուտքի խորհրդին հակառակ, ինչը, իմ կարծիքով, մեր հաջողության կարեւոր կողմն է:

Մենք պարտադիր կերպով չէ, որ անում ենք այն, ինչ պահանջում են մեզանից: Սրա լավագույն ասպացույցը դրամական ռեֆորմն է: Էստոնիայի

դրամական համակարգը կարող էր թողարկել այնքան դրամ, որքան ունեինք օտարերկրյա ֆոնդերից, ինչը կայուն էր պահում դրամը: Երբ մենք հայտարարեցինք, որ պատրաստվում ենք մտցնել դրամական նոր համակարգ, Միջազգային արժույթային հիմնադրամը պահանջեց չձեռնարկել նման քայլ: Նրանք պնդում էին պահպանել ռուբլու համակարգը, չձեռնարկել ոչ մի դրամական ռեֆորմ համոզված լինելով, որ դա մեզ չի հաջողվի, որ մեր այդ նախագիծը կտապալվի: Սակայն մենք իրագործեցինք այդ ռեֆորմը, այսինքն մերժողական պատասխան տվեցինք ՄԱԳ-ի այդ պահանջին: Ռեֆորմը իրականացվեց 1992 թվականի հունիսին եւ այն հաջողվեց: Սեփական դրամ ունենալու ազգային ոգին այնքան մեծ էր, որ ռուբլին պարզապես դուրս մղվեց կիրառումից: Այն փաստը, որ էստոնական դրամը՝ կոռոնան, հեշտությամբ ենթարկվում էր կոնվերտացիայի, նշանակում էր, որ մարդիկ կողմ են դրա ներմուծմանը (ռուբլին դարձելի չէր): Հասարակությունը շքմելու չափ փոխվեց: Խորհրդային հասարակության ամենավատ եւ ամենաանհանդուրժելի տարրերից մեկը, որը երկիրը բաժանել էր ունեւորների եւ չունեւորների, ծանր դրամական շուկան Բեյրյոզկան, ավտոմատ կերպով վերացավ: Մենք այլեւս դրա կարիքը չունեինք, որովհետեւ ունեինք մեր դրամը, որը դարձելի էր: Շատ արագ մենք ձեւավորեցինք նոր տնտեսություն:

Ես բերեցի այս օրինակը, որովհետեւ Արեւմուտքում դրամական հարցերով զբաղվող առաջատար կազմակերպությունը՝ ՄԱԳ-ը, պահանջեց հրաժարվել դրամական ռեֆորմից, սակայն մենք կիրառեցինք այն: Ռեֆորմի իրականացման երեք ամիսների ընթացքում ՄԱԳ-ը սկսեց առաջարկել այլ երկրներին իրականացնել դրամական կառավարում: Մի քանի տարի հետո մեր օրինակին հետեւեցին լատվիացիներն ու լիտվացիները: Բավականին վերջերս Բուլղարիան,

մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով էստոնական դրամական ռեֆորմը, 1998 թվականի հուլիսին ընդունեց դրամական նույն համակարգը: Կատարելով դժվարին ընտրությունն եւ ընդդիմադրելով ուրիշների խորհրդին, մենք ընդդիմացանք Արեւմուտքի պահանջներին՝ դեմ գնալով համընդհանուր կարծիքին:

Որոշ դժվարություններ են եղել սեփականաշնորհման գործընթացում: Հետկոմունիստական աշխարհի շատ երկրներ սկսեցին սեփականաշնորհել վաուչերներ: Սա բավականին տարածված էր, սակայն հանգեցրեց սեփականաշնորհված հաստատությունների եւ ունեցվածքի անդրկապիտալիզացման: Մի շարք երկրներում սա հանգեցրեց վաուչերների գնի արագ անկման, որը կրկին բարձրացվեց կառավարության եւ պետական բանկերի կողմից: Ամեն ինչ ավարտվեց նրանով, որ ամեն ինչ սկսեց նորից սխալ ուղղությամբ: Ամեն ինչ մասնավորեցվեց ամենաբարձր գներով:

Արդյունքում էստոնիայում գրանցվեց Արեւելյան Եվրոպայի ամենամահաջող սեփականաշնորհման գործընթացներից մեկը: Այն տարածված չէր ժամանակին, շատերը համարում էին այն սխալ գաղափար: Գործընթացի արդյունքում այսօր ամեն ինչ սեփականաշնորհվել է էստոնիայում: Անցած տարի սեփականաշնորհվեց էներգետիկ համակարգը: Այժմ ընթացքի մեջ է գտնվում երկաթուղիների սեփականաշնորհման գործընթացը: Հետկոմունիստական աշխարհում սա մնան սեփականաշնորհման առաջին փորձն է: Բավականին դժվար գործընթաց էր նաեւ տարիֆային արգելքների վերացումը, որն ամբողջ երկրով մեկ առաջ բերեց մրցակցություն: Բոլոր բնագավառները, գյուղատնտեսական եւ արդյունաբերական ապրանքները, ամեն ինչ ենթակա է մրցակցության: Սահմանված չէ ոչ մի տարիֆ: Բացի այդ, Սահմանադրությամբ սահմանված է, որ մենք պետք է հավասարակշռենք մեր բյուջեն: Մենք չենք կարող թույլ տալ, որ այն սպառվի: Բյուջեի հավասարակշռմանը վերաբերող ուղղումները էստոնիայում երաշխավորված են Սահմանադրորեն՝ Միացյալ Նահանգների օրինակի նման, որտեղ բավականին երկար տարիներ այն լուրջ խնդիր էր: Պաշտպանականներն ամենից շատն են շահագրգռված բյուջեի հավասարակշռմամբ, քանզի հակառակ դեպքում Պաշտպանության կլուծարվի: Մենք ձեռնարկել ենք որոշ քայլեր, որոնք կարող են զարմանք առաջացնել: Մենք ունեցել ենք անկայուն կապեր: Մեզ գոհացնում է այն հանգամանքը, որ Ռուսաստանի Ֆեդերացիան հետեւել է մեր օրինակին՝ ութ տարի հետո միայն հաստատելով անկայուն կապեր: Անցած տարի մենք խզեցինք մեր կորպորատիվ կապերը, որը նույնպես այն բազմաթիվ գործոններից մեկն է, որը հանգեցրել է էստոնիայում օտարերկրյա ներդրումների բարձր ցուցանիշին:

Անշուշտ, այս բոլոր ձեռնարկումները պետք է իրենց գործն անելին: Սակայն ամեն ինչ կարող է իրագործվել խաղաղ պայմաններում: Մենք նպատակ ունենք հասնել այն բանին, որ արդեն հաջորդ տարի

պաշտպանության նպատակներով արված ծախսերը կազմեն ՀՆԱ-ի 2%-ը, որը անհրաժեշտ պայման է ՆԱՏՕ-ին անդամակցելու համար: Այն շատ փոքր թիվ է համեմատած պաշտպանական այն ծախսերի հետ, որ ստիպված են անել պաշտպանական լուրջ խնդիրներ ունեցող երկրները:

Մեր ունեցած փորձի մեկ այլ դրական հատկանիշ, որը շատ կարեւոր է հաջողության հասնելու տեսանկյունից, կոռուպցիայի վերացումն է: Կոռուպցիան գլխավոր խոչընդոտներից մեկն է ներդրման եւ երկրի զարգացման ճանապարհին: Այստեղ եւս մենք հաջողություն ենք ունեցել: Աշխարհում կոռուպցիայի աստիճանը սահմանող Տրանսպարանտ Ինտերնացիոնալ կազմակերպության տվյալներով, էստոնիայում կոռուպցիան ավելի քիչ է տարածված, քան Եվրոմիության մի շարք այլ երկրներում: Կոռուպցիայի դեմ, որը, իմ կարծիքով, մեծ չարիք է բոլոր փոքր պետությունների համար եւ կանխում է զարգացումը, լավագույնս կարելի է պայքարել բաց միջոցներով: Օրինակ, մենք հրապարակել ենք էստոնիայի բոլոր պետական գործիչների աշխատավարձերի չափը, որը նշանակում է, որ դժվար է, ունենալով ցածր աշխատավարձ, ապրել հսկայական տան մեջ: Շատ դժվար է սա բացատրել հարկային քաղաքականության տեսակետից: Մենք գտնում ենք, որ կոռուպցիայի դեմ ակնհայտ պայքարը ելակետային այն միջոցներից մեկն է, որ կարող է իրականում հաջողություն ունենալ: Այն կարեւոր պայման է փոքր պետությունների զարգացման համար:

«Կոռուպցիան գլխավոր խոչընդոտներից մեկն է ներդրման եւ երկրի զարգացման ճանապարհին»

Վերջապես մի ոլորտ եւս, որի վրա մենք մեծ ուշադրություն ենք կենտրոնացրել՝ կրթությունը: 19-րդ դարից սկսած պատմական մեր փորձը վկայում է, որ կրթությունը փոխհատուցում է իր ծախսերը: Կրթությունը ներդրում է քո սեփական երկրում, քո ապագայի համար, որը բերում է նշանակալի շահույթներ: Այդ պատճառով էլ մենք պետք է ուշադրություն դարձնենք այդ ոլորտին:

Վերջապես մի ոլորտ եւս, որի վրա մենք մեծ ուշադրություն ենք կենտրոնացրել՝ կրթությունը: 19-րդ դարից սկսած պատմական մեր փորձը վկայում է, որ կրթությունը փոխհատուցում է իր ծախսերը: Կրթությունը ներդրում է քո սեփական երկրում, քո ապագայի համար, որը բերում է նշանակալի շահույթներ: Այդ պատճառով էլ մենք պետք է ուշադրություն դարձնենք այդ ոլորտին:

Մեկ այլ բնագավառ, որի մասին ես նշեցի եւ որը եւս մեծ ուշադրության է արժանացել, ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտն է: Այն դիտում ենք որպես զարգացման մի ուղի: Շատ դժվար է մրցակցել Արեւմտյան Գերմանիայի, Ֆրանսիայի կամ Միացյալ Թագավորության հետ՝ ենթակառուցվածքային զարգացման մակարդակով 50 տարվա լճացումից հետո: Գերմանական ենթակառուցվածքների մեծ մասը ոչնչացվել էր արդեն 1945 թվականին, բայց Գերմանիան ամեն ինչ սկսեց նորից, եւ ենթակառուցվածքային զարգացման 50 տարիների ընթացքում կարողացավ բավարարել իր իրական կարիքները: Խորհրդային իշխանության օրոք մենք ունեցանք ենթակառուցվածքային որոշ զարգացում, սակայն այն իրականում չկարողացավ բավարարել մեր պահանջները: Ես ի նկատի ունեմ այն, որ երբ խորհրդային իշխանությունն էստոնիայում կառուցեց ձեռնափայտի իր գործարանը, այն ենթադրում էր բավարարել ամբողջ Խորհրդային Միության եւ Եվրոպայի

մնացած մասի պահանջարկը: 1.4 մլն բնակիչ ունեցող պետության համար դա մեծ բան չէ: Այսպիսով, խորհրդային այս ենթակառուցվածքն իրականում այն չէր, ինչ տպավորություն վայելում էր: Մենք ինտենսիվորեն կոմայուտերիզացրել ենք ուսումնական համակարգը: Բոլոր մեր դպրոցներում այսօր գործում է ինտերնետային համակարգ, դպրոցների 75%-ն ունի ISTN կապեր: Կառավարական բոլոր հանդիպումների ընթացքում օգտագործվում է համակարգիչ եւ ինտերնետային կապ: Եվ եթե անցյալում դրանք տեւում էին 4-5 ժամ, այսօր՝ 45 րոպեից մինչև մեկ ժամ: Շնորհիվ ինտերնետի, կարող ես ամփոջապես օգտվել նրանից ինչ քեզ անհրաժեշտ է: Մենք նպատակ ունենք դրանք դարձնել ավելի ինտերակտիվ: Մեր բոլոր գրադարաններն ունեն ինտերնետային կապ, դպրոցներն ու ինտերնետային կենտրոնները բաց են հասարակության համար: Սա նշանակում է, որ եթե առաջ գյուղական շրջանում ապրող բնակիչը ստիպված էր կտրել-անցնել 50 կմ՝ գործով մայրաքաղաք գնալու համար, ապա այսօր կարող է պարզապես գնալ իր գյուղի տեղական ինտերնետային կենտրոն եւ օգտվել նրա ծառայություններից: Այսօր բնակչության 39%-ը կանոնավոր կերպով օգտվում է ինտերնետից, էստոնացիների 20%-ն ունի իր սեփական համակարգիչը, 25%-ն ունի էլեկտրոնային բանկային հաշիվ, իսկ բանկային գործերի 85%-ը վարվում է ինտերնետի միջոցով: Բանկային իմ վճարումները կամ գործերը կատարելու համար ես դիմում եմ ինտերնետային ծառայության օգնությանը:

Մեր վարած մերքին քաղաքականությունից բացի, մեկ այլ կարևոր խնդիր է Եվրոմիությանն անդամակցելը: Մեր նպատակն է միանալ Եվրոմիությանը 2002 թվականի դեկտեմբերի 31-ին կամ նրա անդամ դառնալ 2003 թվականի հունվարի 1-ին: Թե երբ Եվրոմիությունը պատրաստ կլինի ընդունել նոր անդամներ, այլ հարց է: Ավելի հավանական է, որ դա տեղի կունենա 2004 թվականին: Բանակցությունների ընթացքում էստոնիան համաձայնության է եկել 31 կետերից 18-ի շուրջ, որոնք պետք է կարգավորվեին բանակցությունների միջոցով: Էստոնիան, Կիպրոսը եւ Ալբանիան բանակցային գործընթացի երեք առաջատար երկրներն են: Ես պետք է ասեմ, որ 1997 թվականին, երբ մենք համառորեն պնդում էինք բանակցություններին մասնակցելու ցանկի վրա, որոշ նախապաշարմունք կար մեր նկատմամբ, որպես նախկին խորհրդային երկիր: Արեւմտյան Եվրոպայում ոչ ոք չէր կարծում, որ էստոնիան ունի նույն հնարավորությունները, ինչ Գերմանիան, Լեհաստանը կամ Չեխիան: Երբ բախվում ես նման նախապաշարմունքի հետ, ստիպված ես աշխատել ավելի շատ՝ դրանք հաղթահարելու համար: Դա այնքան էլ հեշտ չէ եւ հաճախ այն կարող է վնասակար լինել: Մեր նպատակն է Եվրոմիությանն անդամակցելը: Ամեն ինչ պետք է լինի Եվրոմիության ստանդարտներին համապատասխան: Պետք է ընդունել Եվրոմիության օրենքներն ու պահանջները: Բանակցային գործ-

ընթացի շնորհիվ մենք կայացրել ենք մի շարք ղեկարիւն որոշումներ, այդ թվում՝ օրենսդրական, որոնք ավելի եվրոպականացրել են էստոնիան: Եվրոմիությանն անդամակցելու համար անհրաժեշտ է համապատասխանել մի շարք՝ կարևոր ստանդարտների: Եթե դու բավարարում ես այդ պահանջներին, Եվրոպական չափանիշներին համապատասխանեցնում քո կաթնամթերքի եւ մսի գործարանները, գյուղատնտեսությունը, դրանով բարձրանում են քո սեփական երկրի արտադրանքի որակը, ձեռք ես բերում մեծ արտահանման շուկա: Սա իրականում եղել է էստոնիայի տնտեսական աճի ամենագլխավոր պայմանը, քանզի, ինչպես ասվեց, մեր ապրանքների 70% արտահանվում է Եվրոմիության երկրներ, եւ դա արդյունք է Եվրոմիության ստանդարտներին համապատասխանեցման:

Էստոնիայի արտաքին քաղաքականության խնդիրներից մեկը ՆԱՏՕ-ին անդամակցելն է: Սի քանի տարի առաջ ՆԱՏՕ-ին միանալու հեռանկարն այնքան էլ գրավիչ չէր: Մենք զգալիորեն բարեփոխել ենք ռազմական դաշտը, չնայած «բարեփոխել» բառը այնքան էլ տեղին չէ, որովհետեւ հենց սկզբից ռազմական ոլորտ չենք ունեցել, եւ սկսել ենք կառուցել հիմքից՝ դարձնելով այն ՆԱՏՕ-ի հետ մրցակցելու ունակ ուժի, որը համապատասխանում է ՆԱՏՕ-ի չափանիշներին: Սա վերաբերում է ոչ թե զենքի տրամաչափին, որը շատ չնչին հարց է, այլ ռազմական ոլորտին, քաղաքացիական վերահսկողությանը եւ հատկապես ռազմական կյանքի մակարդակին, որն իրականում ամենակարևոր կողմերից մեկն է: ՆԱՏՕ-ի ընդլայնման հեռանկարները դեպի բալթյան երկրներ ավելի քան երբեք ընթանում է մեծ հաջողությամբ: Եթե երկու տարի առաջ հեռանկարներ գրեթե չկային, ապա այսօր, դրանք շոշափելի են: Մենք հուսով ենք, որ 2002 թվականին անդամակցելու հրավեր կստանանք ՆԱՏՕ-ից:

Սրանք են մեր արտաքին քաղաքականության երկու առաջնային խնդիրները: Այսօր գործերի ընթացքը գոհացուցիչ է: Թե ինչ կլինի Եվրոմիության հետագա ճակատագիրը, ղեկար է ասել: Ինչպես նշեցի, այսօր կան մի շարք խոչընդոտներ Եվրոմիության հետագա ընդլայնման ճանապարհին: Որոշ մարդիկ չեն ցանկանում տեսնել այդ ընդլայնումը, ցանկանում են կանխել այն, մյուսները վախենում են էժան աշխատուժից, գներից, եւ իհարկե, առկա է այն պարզ նախապաշարմունքը, որով Արեւելյան Եվրոպացիները ինչ-որ ձևով տարբեր են արեւմտաեվրոպացիներից: Կարծում եմ, որ այս բոլորը ժամանակի ընթացքում կհաղթահարվեն, առնվազն այն, ինչ վերաբերում է նախապաշարմունքին, իսկ վախը գների եւ որպես էժան աշխատուժ ճնշված լինելու նկատմամբ՝ չափազանցված են, եւ դրանք ինձ այնքան էլ չեն մտահոգում:

Այսպիսով, սա ընդհանուր առմամբ, այն ամենի համառոտ պատկերն է ինչ արվել է էստոնիայում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Որո՞նք են այն անհաջողությունները, անկումները, չիրականացված պլանները, որ գրանցվել են էստոնիայի զարգացման ընթացքում:

- Պետք է ասեն, որ սեփականաշնորհման գործընթացը բավականին դժվարին էր: Դժվարություններ կան նաև այսօր: Մարդիկ գերադասում են մասնավորը, սակայն հաճախ համոզվում են, որ այն լավագույնը չէ: Բոլոր այն ձեռնարկումները, որոնց մասին ես խոսեցի, ունեցել են իրենց բազմաթիվ հետեւանքները պակաս ընդունակ մարդկանց համար, մարդիկ, ովքեր տնտեսապես ակտիվ չեն: Ես ի նկատի ունեմ այն, որ անդունդը հարուստների եւ աղքատների միջեւ զնայով խորանում է: Սա մի բան է, որ կարող է բերել երկարատեւ անկման, եթե չկրճատենք այդ անդունդը: Էստոնիայում կա մարդկանց մի խումբ, որ իրեն զգում է հասարակությունից վտարված:

- Ես կարդացել եմ, որ փետրվարի 24-ը էստոնիայում համարվում է ավելի կարելու օր, քան օգոստոսի 20-ը: Եթե դա այդպես է, կհիմնավորե՞ք թե ինչո՞ւ:

- Ամեն ինչ կապված է զանգվածային շարժման հետ: Իրականում Դուք ճիշտ եք. օգոստոսի 20-ը համարվում է աշխատանքային օր: Մենք հռչակել ենք երկրի անկախությունը 1918 թվականի փետրվարի 24-ին: Այն ինչ տեղի ունեցավ 1964 թվականի հունիսի 16-ին անօրինական ռազմական պաշարում եւ տարածքի ինտեգրացում էր: Եթե 1940 թվականի հունիսի 16-ի դրությամբ էստոնիայում ունեիք ինչ-որ սեփականություն, ապա Ձեզ այն կփոխհատուցվի: Էստոնիայի հանրապետությունը գոյություն է ունեցել 83 տարի: Օգոստոսի 20-ի գինված պայքարին զոհ գնաց 20000 մարդ: Դա տեղի ունեցավ այն ժամանակ, երբ Մոսկվայից մի խումբ հարբած մարդիկ որոշեցին ինչ-որ բան ձեռնարկել, որ ավարտվեց անհաջողությամբ: Դա էստոնացիների պայքար չէր: Էստոնացիները պայքարում էին անկախության համար պատերազմում, որը շարունակվեց երկու տարի եւ իսկեց հազարավոր մարդկանց կյանքեր: Եվ սա է, որ նշանակություն ունի մեզ համար:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ

«Դասախոսությունների շարք» ծրագիր



**Լեռնային Ղարաբաղի
հանրապետության արտաքին
գործերի նախարար**

Նաիրա Մելքունյանը

ներկայացնում է

**«Ղարաբաղյան կարգավորում.
խաղաղություն՝ տարանջատման
միջոցով»**

Հունիսի 11-ին, ժամը 18:00-ին

Հայաստանի ամերիկյան համալսարանի
փոքր դահլիճում

Դասախոսությունը կընթանա հայերենով՝
անգլերեն համընթաց թարգմանությամբ

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝

Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան

ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 51-27-07

Հասցեատեր՝